ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 ապրիլի 2026թ. **N 40-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԱԶԱՏ ՔՎԵ» ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՆՎԱՆ ՆԵՐՔՈ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Ազատ քվե» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համատեղ դիմումը՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ՊԱՐԶԵՑ.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

2026 թվականի ապրիլի 9-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվել է Գրիգոր Ջանիկյանի դիմումը, որին կցված են եղել փաստաթղթեր, որոնք Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշման համաձայն՝ պետք է կցվեն հավատարմագրվելու մասին դիմումին: Դիմումը վերաբերվում է «Ազատ քվե» դիտորդական առաքելությանը: Դիմումի և ներկայացված փաստաթղթերի նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերի փաթեթում առկա են թերություններ, որոնց վերաբերյալ դիմումատուն սահմանված կարգով իրազեկվել է, տրվել է ողջամիտ ժամկետ, նշված ժամկետում թերությունները շտկվել են:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի՝ ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մեկ միասնական անվան ներքո դիտորդական առաքելություն իրականացնելու համար համատեղ դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից՝ Ընտրական օրենսգրքի սահմանված պահանջներին համապատասխանում է միայն «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը:

«ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպության կանոնադրության ուսումնասիրության հետևանքով պարզվել է, որ կազմակերպության կանոնադրական նպատակները չեն ներառում ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Սույն վարչական վարույթի շրջանակներում դիմումատուի կողմից ներկայացվել է գրություն, որում նշված է. «Սույնով տեղեկացնում ենք, որ «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպության հետ համատեղ դիմել է ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով: Տեղյակ ենք, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգի համաձայն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք վերապահվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր: ***Թեպետ «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի կանոնադրության մեջ նշված ձևակերպումները բառացիորեն չեն ներառում «ժողովրդավարություն» և «մարդու իրավունքներ» եզրույթները***, սակայն կանոնադրությամբ ամրագրված մի շարք նպատակներ ուղղակիորեն առնչվում են այդ ոլորտներին: Մասնավորապես՝

- նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը, զարգացմանը, կայացմանը և որոշումների կայացման գործընթացներում ներգրավմանը,
- նպաստել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը:

Բացի այդ, կազմակերպության գործունեությունը հիմնադրման օրվանից՝ 2016 թվականից, շարունակաբար ուղղված է ժողովրդավարության զարգացմանը, քաղաքացիական մասնակցության խթանմանը և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող նախաձեռնությունների իրականացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել կազմակերպության կանոնադրական նպատակների և իրականացված գործունեության բովանդակությունը և ընդունել որոշում «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության

զարգացման հասարակական կազմակերպությունը և «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական ՀԿ-ի համատեղ դիտորդական առաքելության հավատարմագրման վերաբերյալ:»:

Վերը նշված դիրքորոշման ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուի պնդմամբ «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպության կանոնադրության մեջ կանոնադրական նպատակները չեն ներառում «ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր», միաժամանակ, նշում է, որ «կանոնադրությամբ ամրագրված մի շարք նպատակներ ուղղակիորեն առնչվում են այդ ոլորտներին»:

Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի հավատարմագրման մասին դիմումը, եթե կազմակերպության կանոնադրական նպատակները չեն բավարարում սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետի պահանջները…»:

Միաժամանակ, Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ «… Եթե համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու համար դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից կամ հիմնադրամներից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու վերաբերյալ դիմումը մերժվում է միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե դիմումի մերժման արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ հասարակական կազմակերպություն կամ հիմնադրամ, ապա այդ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը հավատարմագրվում է որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Ազատ քվե» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համատեղ դիմումը՝ «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպությանը վերաբերելի մասով, ենթակա է մերժման՝ Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին չբավարարելու հիմքով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ «Ազատ քվե» դիտորդական առաքելություն իրականացնելու համար համատեղ դիմում ներկայացրել են երկու հասարակական կազմակերպություններ, որոնցից մեկին վերաբերելի մասով՝ դիմումը ենթակա է մերժման, և դիմումի մերժման արդյունքով Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանող հանդիսանում է միայն մեկ կազմակերպություն՝ «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը, ուստի, «Երիտասարդները

հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը ենթակա է հավատարմագրման որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, 31-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Ազատ քվե» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համատեղ դիմումը՝ միայն «ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական հասարակական կազմակերպությանը վերաբերելի մասով, մերժել:

2. «Ազատ քվե» դիտորդական առաքելություն միասնական անվան ներքո հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների համատեղ դիմումը՝ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ, բավարարել՝ միայն «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության մասով՝ որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող՝ «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպություն անվանմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի ապրիլի 14
ք. Երևան